ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հոկտեմբերի 2023 թվականի N 1714 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 1994-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 և 2007 թվականի հունիսի 21-ի N 819-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1994-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի՝

1) 14-րդ կետի 1-ին ենթակետում «ընդհանուր քանակի առնվազն 10 տոկոսի չափով միջմարզային և ներմարզային ավտոբուսային կանոնավոր երթուղիներում,

իսկ ներհամայնքային ավտոբուսային կանոնավոր երթուղիներում՝ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքով սահմանված տոկոսի չափով» բառերը փոխարինել «երթուղիներում ընդհանուր քանակի առնվազն 10 տոկոսի չափով՝ բացառությամբ «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ավտոբուսների ընդհանուր քանակի 100 տոկոսի չափով դեպքերի» բառերով.

2) 22.1-ին կետում «1.5» թիվը փոխարինել «2.5» թվով.

3) 22.1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 22.2-րդ կետով.

«22.2. Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության կողմից սույն կարգի 83-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը խախտվելու հիմքով երթուղային ցանցը կազմակերպող մարմնի կողմից կազմակերպությանը երթուղիների սպասարկման իրավունքից զրկելու դեպքում գումարը չի վերադարձվում N 12 ձևում նշված կազմակերպության հաշվեհամարին։».

4) 66-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«66. Մրցույթը համարվում է չկայացած, եթե՝

1) հանձնաժողովն իրավազոր չէ, որի դեպքում 10-օրյա ժամկետում ընդհանուր հիմունքներով անցկացվում է կրկնակի մրցույթ։ Կրկնակի մրցույթին մասնակցելու համար նոր հայտեր չեն ընդունվում.

2) մրցույթին մասնակցելու համար ոչ մի հայտ չի ներկայացվել, կամ ներկայացված հայտում (հայտերում) առկա է սույն կարգով սահմանված հայտի մերժման հիմքերից որևէ մեկը, կամ, եթե մրցույթին մասնակցելու համար հայտ ներկայացրած կազմակերպություններից ոչ մեկը չի ներկայացել մրցույթին.

3) արտակարգ իրավիճակների պատճառով անհնար է դարձել մրցույթով նախատեսված աշխատանքների կատարումը։».

5) 66-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 66.1-ին կետով.

«66.1. Սույն կարգի 66-րդ կետով նախատեսված մրցույթը կամ կրկնակի մրցույթը չկայացած հայտարարվելու կամ դրանց արդյունքում հաղթող չճանաչվելու դեպքերում հայտարարվում է նոր մրցույթ՝ սույն կարգի պահանջներին համապատասխան։».

6) N 1 ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

7) N 14 ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի.

8) N 7 ձևից մինչև N 10 ձևը ներառյալ, ամբողջ տեքստից հանել «(միկրոավտոբուսի)» և «(միկրոավտոբուսների)» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

05.10.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ